

ՂԻՆԱՆՆԱԿ, Ե՛ ԼԻՆԵՆԿԵՒ :



ԼԻՆԵՆԿԵՒ :

ՂԻՆԱՆԿԻ շԱՏՐ՝ մեռնելու ատեն
որոշեր էր որ իր Շահբար անունով
պղտի որդին ըլլայ իրեն յաջորդ . բայց
իշխանները վարպետութիւն մը ՂԻ-

Նանշաճը նստուցին հօրը աթոռը, ու
րովհետեւ եղբարցը մէջ ամենէն մեծն
ու խելացին էր . և ուզելով որ ասի-
կայ ապահով կերպով թագաւորէ ,
անգթութեամբ Պապէր շահին ցեղի
բոլոր մանչ տղաքը ջարդել տուին՝ իր-

մէ ու իր չորս տղոցմէն զատ : **Ղիհան** շահը 1592^{ին} ծնած էր , և 1628^{ին} **Իկրայի** մէջ **Թագաւոր** եղաւ . ան օրէն ետքը անունը սուլթան **Սէհէմ** մէտ **Դահապետ**ին ըսուեցաւ , և խիստ մեծ հանդէսով **Թագաւորեց** :

Խելքին և **քաջութեանը** կողմանէ շատ երևելի եղաւ . տէրութեան սահմանները ընդարձակեց՝ **Երպուտ** տային հարաւային կողմէն ինչուան **Կոլքոնտի** ու **Սիզափուրի** սահմանագլուխները : **Եսամի** և **Թիպէթի** երկիրներուն մէջ յաջող պատերազմներ ըրաւ , հնդկաստանի մէջ ալ փառաւոր շէնքեր շինեց : **Տէլհէն** քիչ մը հեռու **Ղիհանփուր** անունով մեծագործ քաղաք մը կանգնեց , մէջն ալ իրեն համար պալատ մը՝ որ ինչուան հիմա կեցած է . բայց ուրիշ շէնքերէն աւելի՝ իր մեծագործութիւնը կ'երևնայ : **Կուրձիհան** ըսուած քրոջը համար շինել տուած շիրմին վրայ : **Ես** գերեզմանը փառաւոր պարտէզի մը մէջ՝ բարձր տեղւոյ վրայ շինած է , ճերմակ մարմարիոնէ ու ազնիւ քարերէ . ձեւը քառակուսի է , ու ամէն մէկ կողմին երկայնքը 200 կանգուն :

Եստուածային նախախնամութե հաստատուն վճիռը կ'երևնայ որ անհնազանդ և ապերախտ տղոց որդիքն ալ անհնազանդ ու ապերախտ կ'ըլլան : Եւ ահա ինչպէս որ **Ղիհանշահ** **Ղիհանկիրէն** ապստամբելով կ'ուզէր իր հօրը **Թագաւորութիւնը** յափըշտակել ու զինքը սպաննել , ասանկ ալ իր իրեք որդիքը՝ **Սիւճա** , **Էրէնկզիպ** և **Սուրատ** լսելով թէ հայրերնին **Ղիհանշահ** հիւանդ է , պատրաստուեցան որ **Թագաւորութիւնը** առնեն ձեռքէն պատերազմով . միայն իր անդրանիկ որդին **Տարա** հաւատարիմ մնաց , բայց պատերազմի մէջ յաղթուեցաւ : Իրեք ապստամբ որդւոցը մէջ՝ ամենէն խելացին ու խորամանկը **Էրէնկզիպն** էր . ասիկայ **Սիւճային** ու **Սուրատին** ձեռքովը **Տարային** յաղթելէն ետքը , իրեքն ալ մէկէն անգթութեամբ սպաննել տուաւ : Իսկ

իր հայրը բռնեց բանտ դրաւ , որ ուր թը տարիէն վերջը 1666^{ին} բանտին մէջ մեռաւ : **Ես** ապստամբութիւնները **Թիմուրեանց** ցեղին մէջ ինչուան ետքը շարունակեցին , ու իրենց կործանման գլխաւոր պատճառը եղան :

Էրէնկզիպ **Թագաւորելէն** առաջ քաջ զօրապետ էր , և իրեն հայրը ասոր ձեռքովը կը յաղթէր **Թինամիս** թուրք . **Տէքանին** վրայ տիրեց ու **Սարաթները** նուաճեց : **Էրդարութ** կամ **Թէ** խստութեամբ կառավարեց իր ժողովուրդը , և հնդկաստանի մէջ **Սողոյի** տէրութիւնը շատ զօրացուց : **Ես** ատենի եւրոպացի ճամբորդները կ'ըսեն թէ 300,000 ձիաւոր , 400,000 հետեակ զօրք , ու 3000 փիղ ունէր . իրեն եկամուտը 200 միլիոն **Փրանքի** կը հանէն . ընտանեացը և ծառայիցը համար օրուան մէջ 125,000 **Փրանքի** ծախք կ'ընէր կ'ըսեն , **Թէպէտ** և ինքը քիչ բանով գոհ կ'ըլլար . աթուղ ազնիւ ուսուղ քարերով զարդարուած էր , և **Չինու** **Թագաւորէն** վերջը ալ խարհքիս զօրաւոր ու հարուստ **Թագաւորը** ինքը կը սեպուէր : Բայց ինքը այնչափ մեծութեան մէջ ամենէն երջանիկ չէր . **Եստուած** զինքը պատժեց նոյն պատժով ինչ որ ինքը իր հօրը քաշել տուեր էր : **Ս** ասն զի **Թէպէտ** և ինքը բնական մահուամբ մեռաւ , բայց կ'ըսեն թէ իր որդւոցը ապստամբութիւնը եղաւ մեռնելուն պատճառը 1707^{ին} . իրմով լմնցան **Հնդկաստանի** մէջ **Թիմուրեանց** տէրութեան փառաւոր ժամանակները :

ԱՆՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀՈՎԻԹ ՀԻՐԱԿԱՑ

Ա .

Սենյալ հովնայ և Դադաբայնոյ :

Իսն զուարթալոյս և ջերմասիւզ աւուրք նաւասարդի ամսեան . և արեգական դեռ ևս անցեալ զօթեանօք